

Վահագին



# ԱՐԱՐԱՏ

ԿՐՈՆԱԿԱՆ - ԱՍՐԱՅԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ - ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՏԻՐԱԿԱՆ - ՄԱՆԿԱՎՐ-  
ԺԱԿԱՆ, ԱԶԿԱՑԹԻՆ ԵՒ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

Փջոր. Իթ. ՏԱՐԻ.

ՀԵՄ-ԱՐ ՁՈՒՔԾՈՒՔ

ԱՊՐԻԼ 1896 թ.

ԿՐՈՆԱԿԱՆ - ԲԱՐԱՅԻՆԱԿԱՆ

## ԱՆՆԵՐԵԼԻ ՄԵՂՔԸ

Ամէն ասեմ ծեզ, զի ամենայն թողե  
որդոց մարդկան մեղք եւ համոյտիմք՝ որ-  
շափ եւ համոյեսցեն, բայց որ համոյեսց զո-  
գին սուրբ ոչ ռնիքի թողովիմք յափանան,  
այլ ուարուապան մեջի յափսենիցն մեղաց :  
Մարկ. Գ. 28-29.

աղէս Մատթէոս աւետարանիչն է աւելացնում  
հայհյական խօսք ուղղեն Մարդոյ Արդւոյ  
գէմ՝ ճանաչում է այսու ամենայնիւ մի յա-  
փանական մեղք, որի համար թողովթիւն  
չկայ: Մեր ժամանակի մարդիկ ի հարկէ, ո-  
րսնը կարծես մեղքի զիտակցութիւնը խ-  
պառ կողցրել են, որոնք ամէն չարեաց վե-  
րայ իրրեւ քնական պատահարների վերայ են  
նայում և արամազդիր են աչք փակելու թէ  
սեփական և թէ օտար ամենահրեշտակոր օրի-  
նազնացութեանց առաջ՝ սոսկալի չեն համարի  
այդ հակագրութիւնը. բայց ում մէջ կենդանի  
է զեռ բարոյական զգացումը և ստիպում է

Հակալի հակագրութիւն: Ըստ աւետա-  
րանը, որ եօթանանեկին եօթն ան-  
դամ յանցաւոր եղրօրը ներել պատուիրե-  
լով՝ Մատուծոյ կողմից ևս ներումն է խոս-  
տանում մարդոց բոլոր մեղքերի, բոլոր յան-  
ցանքների համար, եթէ մինչեւ իսկ ըստ ե-  
րեսութիւն ամենամեծ յանցանքը գործեն, ինչ-

տեսնել, թէ որքան տգեղ է և մահացու ամենաթեթև մեղքն անդամն որքան մեծ և բարերար այն շնորհը, որ ամէն մեղք սրբում է և քան զարդ սպիտակ դարձնում՝ նա չէ կարող չսոսկալ այդ անտանելի մաքից, թէ կայ մի մեղք, որի համար քաւութեան ոչ մի միջոց չունի նոյն ինքն Ամենակալ և Ամենաբարի Տէրը: Եւ սակայն աւետարանական ճշմարտութիւն է այդ, և եթէ մենք ուշի ուշով քննենք Փրկի ասածները, կհարկազբուինք խոստովանելու, որ այդպէս էլ պէտք է լինէր:

Երբ Փրկիչը խաչի վերաց Խրեն խաչ հանողների համար աղօթում էր. «<sup>▲</sup>սցր, թող զոցա», աւելացրեց նաև՝ «զի ոչ զիտեն զինչ զործեն», և երբ Պետրոս առաքեալը յարուցեալ Քրիստոսի մասին քարոզելով՝ յորդորում էր հրեաներին և հնարաւոր էր համարում նոցա համար, ապաշխարել իրենց դըժոխային յանցանքը՝ Կորա գէմ և կրկին՝ Կորան ապաւինել՝ անումէր այդ այն համոզմամբ, թէ «զիտեմ, զի անգիտութեամբ արարէք՝ որպէս և իշխանքն ձեր»: Եւ յիշաւի մեր յանցանքների ամենամեծ մասը անգիտութիւնից է յառաջ զալիս՝ մարդկային մաքի և հոգւոյ տիարութիւնից, մեր աչքը դիւրութեամբ է խարուում, մեր սիրութեամբ զայթակղուում, և մենք յաճախ անընդունակ ենք ուղիղը տեսնելու և զգալու: Բայց կայ մի բան, որ մենք չտեսնել և չզգալ չենք կարող, բացարձակ բարին, ճշմարիտ և սուրբը այնպիսի առանձնայատիւն ունին, որ հակառակ իսկ մեր ցանկութեան ազդում են մեր վերայ. Աստուծոյ ս. <sup>▲</sup>ոգին, որ բացարձակ բարւոյ, ճշմարտութեան և սրբութեան հոգի է, զործում է ոչ թէ գուրսը՝ մեր աչքի կամ մըտքի առաջ պատկերանալով, որպէս զի կարելի լինէր՝ Կորան չմանաչել այլ ներդործում և անմիջապէս մեր ներսը մեր հոգու խորքում. ուստի և եթէ մենք ընդդիմազրենք այդ ներդործութեան, Կորա ազգեցութեանը չենթարկուենք, այն ժամանակ արդարե ոչ մի միջոց չկայ մ.թ. կորուսից ազատելու՝ մեր ներքին տեսութեան բոլոր պատուհանները

փակ են աստուածային լուսոյ առաջ և մեր մեղսամած, խաւար հօգու մէջ ոչ մի ճառագայթ ներս թափանցել չէ կարող:

Այսպիսի մի վիճակի ենթարկուելու վրանդի ներքոյ էին ահա այն փարիսեցիները, որոնց նկատմամբ Փրկիչն արտասանել է վերև յառաջ բերած խօսքերը: Ամբողջ օրը ժողովուրդը շրջապատել էր Կորան, հիւանդներին Կա բժկում էր, տառապեալներին միսիթարում՝ այնքան զբաղուած էր այդ սուրբ գործով, ասում է աւետարանիչը, որ ժամանակ անդամ չէր դանում հաց ուտելու, այնպիսի ոգեգորութեամբ էր զործում և խօսում որ մօտն եղողները կարծում էին, թէ մոլեգնեալ իցէ: Փարիսեցի դպիրներն այդ ամէնը տեսնում են, տեսնում են Կորա առաջ բերած մեծամեծ բարիեները՝ Կորա զործած հրաշքները ուրանալ չեն կարող, բայց այնքան բժացած է նոցա բարոյական զգացումը, այնքան նախապաշարուած նոցա միտքը, որ պատրաստ են աւելի շուտ բացարձակ բարին բացարձակ չար անուանելու՝ քան խոստովանելու, թէ իրենք սխալութ են, թէ ուրիշ են Աստուծոյ ընտրած Ճանապարհները և ուրիշ սկրզբունքներով է առաջնորդուում՝ Կորա ուղարկած Անսիսան, քան իրենք իրրե Խարայէլի օրէնսդիտներ ենթարդուում էին, թէ եղագերուց գոյ ի գմա և իշխանաւն զիւաց հանէ դազմաւ: Եւ այդ անօրինակ զրպարտութեան վրայ Փրկիչն ամենեին չէ վրդովուում: Կա հանգիստ ձայնով բացարձում է միայն, որ ուրանալ այդ ամենապարզ ճշմարտութիւնը թէ սատանան սատանայ հանել չի կարող ինչպէս որ կրակը կրակ չի հանդինի, և զիւական զօրութեան վերազրել այն, ինչ որ ակներե Աստուծոյ ս. <sup>▲</sup>ոգւոյ ազգեցութեան արդիւնքըն է՝ ս. <sup>▲</sup>ոգին հայհոյել, այսինքն աններելի մելք զործել կնշանակի:

Պէտք է շմռունալ, որ այս հայհոյիները հասարակ տղէտ մարդիկ չեն, այլ ժողովրդի կրթուած և ընտիր դասին էին պատկանում: Հասարակ մարդոց զգացումներն էլ հասարակ են և նոքա աւելի տրամադիր են բարոյական

աշխարհին պատկանող իրովութիւններն առնելու այնպէս, ինչպէս որ կան՝ իրենց անմիջական տակաւութեամբ։ Խարձրագոյն առաքինութեան զիմաց անդատակ չարութիւն հանդէս է գալիս միայն այն ժամանակի երբ մի սխալ ոչ բարոյական հիմանց վերայ հաստատուած կրթութիւն խճողում է մարդոց մըտքին այնպիսի գաղափարներս և շոյում ստորհակումներն այնպիսի ներշնչումներով, որ նոցահոգույթը մէջ ստեղծուում է միառանձին աշխարհի իւր սեփական կանոններով և սկզբունքներով՝ փակ ամէն արտաքին բարոյական ազգեցութեան առաջ։ Ահա արդի քաղաքակիրթ աշխարհը, ինչպիսի հրեշային արտայայտութիւն չեն գտնում յաճախ նորա լուսաւոր գաղափարներն ու կոկուած զգացմունքները։ Երիքովի ճանապարհի վերայ ընկած կիսամահ վիրաւորի մօտից նա ոչ միայն անտարբեր է անցընում ինչպէս այն քահանայն և զետացին, այլ մինչև անգամ պատրաստ է մի քանի հարուած էլ ինքն իջեցնել եթէ վիրաւորը զուխ բարձրացնել։ Օգնութիւն, մեռնում եմ մի կաթիլ ջուր պապակուած լեզուիս, կանչել համարձակուի։ ինչպէս է յանգինում դա իւր չին տեղով ազնիւ անցորդների հանգիստը վրդովել մեղաւոր է, որ աւազակների ձեռքն ընկաւ, թող կրէ իւր մեղքի պատիժը և ընորհակալ լինի աշխարհից, որ իրաւունք է տալիս մի քանի շունչ ևս աւելի քաշելու ու խաղաղ մեռնելու։

Օարհուրեկի՞ չէ մտածելն անգամ որ մարդիկ այսպիսի մտածմունքների և զգացումների ընդունակ են. ոչինչ այնչափ չէ վիրաւորում մեր մարդկային արժանապատուութիւնը, այնպիսի մեծ և արդար զայրոյիժ ազնիւ սրտերի մէջ չէ բորբոքում ինչպէս այսօրինակ հայհոյութիւնը արդարութեան և ճշմարտութեան սկզբունքների գէմ։ Մենք շղիտենք, թէ ինչ աստիճան զարդացած պէտք է լինի նա, որ Աստուծոյ ո. Հոգույ հայհոյութիւն և անքաւելի մեղք համարուի. բայց գիտենք, որ մի դիւական հակումն դէպի ոյդ կողմը զբեթէ բորոր մարդոց մէջ կայ և ամենատգեղ

կերպով երեան է զալիս այն դէպեկումն երբ նա արտայայտուում է ոչ թէ օտարների, հեռաւորի նկատմամբ այլ մօտիկ շրջաններում բնական և բարոյական սերտ կապերով միմանց հետ կապուած անձանց մէջ։ Հրեաները սարսափելի մեղք գործեցին իրենց Փըրկչին ի խաչ հանելով բայց պատմութեան գատաւորը՝ արդարութեան հոգին, նոցանից ոչ ոքի այնպէս խսախւ չէ հաղածում ինչպէս այն թշուառականին, որ Արդարութեան Արեգակի կենդանարար անմիջական ազգեցութեան ներքոյ այնքան երկար ժամանակ անզգայ մնաց և ճշմարտութեան առաքեալ կոչուած լինելով՝ անօրէնութեան առաջնորդ և իւր Տիրոջ գաւաճան հանգիստացաւ։ Աւ արդարութեան ոգին դեռ չէ մեռած ինչպէս ամեն քրիստոնեայ ժողովուրդի այնպէս նաև մեր պատմութեան մէջ, Պետոդ երեկոյ բերանով՝ կանչում է Կաստորի աւետարանի ուխտը զրժողների, նենազաւոր խորհուրդներով իրենց և ուրիշներին խարսխների եակից. «Ձնէ արդարե զու կենդանութեամբ զզուիսդ ի վերայ ուսոցդ ի Հայուան Աստուծոյ չէ խօսեցեալ»։

Դ. Վ.



ԲԱՌԵՔԵԸՆ, ԽՆԴՐԻ ՆԿԱՏՄԵՄՔ ՄԵՐ  
ԵՒ ՄԽԱԹԱՐԵՎԵՂ ՀԱՅՐԵՐԻ ԱԽՆԵՑԱՌ  
ՀԱՅԵՆՑՔՔ,

Կնցեալ տարուայ Արարատի Կայեմբեր  
համարում (եր. 386) պ. Քարամեան հարկ  
էր համարել պրոֆ. Կեօլզեկէի մի ծանօթութեան վերայ իւր կողմից ևս ծանօթութիւն աւելացնել, հերքելով մեծանուն զիտնականի այն թիւր կարծիքը, թէ Հայոց եկեղեցին միաբնակութիւն է ընդունել, և յարելով թէ «մեր ս. եկեղեցու մասին այս տեսակ մոլորութիւն տարածելուն շատ են նպաստել միաբնակութ (monitor) և զրանց արժանի ժառանգ Ախիթարեանները, որոնք եւրոպացւոց համար հեղինակաւոր անձինք են Հայոց վերաբերեալ խնդիրներում։ Այս նկատմութիւնը առիթ է եղել Ախիթարեան հայ-